«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1564

«11» 10 2024թ.

«ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Համաձայն 2024 թվականի մարտի 15-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված շինարարական և տնտեսական ապրանքների մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/7-1-ԵՊԲՀ-1» պայմանագրի՝ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում, ի թիվս այլ չափաբաժինների, մատակարարել թիվ 51 (Դռան փականի միջուկ) և թիվ 81 (Պողպատե լար 30 մ) չափաբաժիններով նախատեսված ապրանքները, իսկ թիվ 90 (Մեկանգամյա օգտագործման բաժակ) չափաբաժնի մասով պարտավորվել է մատակարարումը իրականացնել 2024 թվականի ընթացքում, փուլային տարբերակով՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի, սակայն համաձայն «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ին ներկայացված թիվ 12436 գրության՝ վերջինս հրաժարվում է մատակարարել թիվ 51 և 81 չափաբաժիններով նախատեսված ապրանքները ամբողջությամբ, թիվ 90 չափաբաժնով նախատեսված ապրանքը մասնակի՝ մնացորդային քանակի մասով:

Հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 9-ին «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված թիվ 12436 գրությունը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը միակողմանի լուծում է 15.03.2024թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/7-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագիրը թիվ 51 և 81 չափաբաժինների մասով ամբողջությամբ, թիվ 90 չափաբաժնի մասով չմատակարարած՝ մնացորդային քանակի մասով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ **Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատարող
Գնումների բաժնի առաջատար մասնագետ
Մ. Ղարիբյան հեռ. 010 301000 (438)